ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N1/3

,,29,,դեկտեմբերի 2021 թվականի գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի նորընտիր ավագանութվով 13 (տասներեք) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Առաքելյան Վահե Վարդանի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
11. Հովսեփյան Արգամ Ռադյայի
12. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
13. Ձեյնալյան Մասիս Արամայիսի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 2 (երկու) անդամներ՝ Ասպետ Գալստյանը և Կարեն Բաղդասարյանը:

որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 13 (տասներեք)** անդամները:

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքի ղեկավարի տեղակալը, խորհրդականը և օգնականը:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի առաջին նստաշրջանի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին,**
2. **«Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից 2022 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 43-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին,**
5. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին,**
6. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին,**
7. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 19-ի N 7-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին,**
8. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին,**
9. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին,**
10. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ա. Բաղդագյուլյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 14-րդ հոդվածներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում տեղական տուրքերի գոտիավորումը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում 2022 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում 2022 թվականի տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել, որ տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. **«ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ և ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից 2022թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 1
Ձեռնպահ է քվեարկել Մասիս Զեյնալյանը:
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 43-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թվականի հունվարի 1-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ա. Միրզոյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշմամբ հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով:

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. Միրզոյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով, 82.1-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. Միրզոյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեն.
   1) եկամուտների գծով՝ 238021,7 հազ. դրամ,
   2) ծախսերի գծով՝ 238021,7 հազ. դրամ
2 Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի մնացորդի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի մնացորդի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանել՝
   1) համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ.
   2) համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 7-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2020թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> N 7-Ա որոշման հավելվածում կատարել փոփոխություն, համայնքային սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում կատարել լրացում և գույքացանկ ներառել.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքին նվիրաբերված՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանն ամրացված (հաշվեկշռում հաշվառված) «ԶԻԼ 130 ԱԲ-40» մակնիշի 832VV01 պետհամարանիշով (թողարկման տարեթիվը՝ 1988 թվական, տեխնիկական

անձնագրի համարը՝ SB 832870, հենասարքի համարը՝ 2714050, վերագնահատված (շուկայական) արժեքը՝ 0 դրամ) տրանսպորտային միջոցը (այսուհետ՝ Գույք):

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. Բաղդագյուլյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, նկատի ունենալով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող՝
   1) 0.007744 հա(գյուղ Տեղ, Կեղվերի ձոր թաղամաս, թիվ 1, կադաստրային ծածկագիր 09-101-0116-0032),
   2) 0.004623 հա (գյուղ Տեղ, Ճախկարի փոս թաղամաս, թիվ 2, կադաստրային ծածկագիր 09-101-0114-0022),
   3) 0.004624 հա (գյուղ Տեղ, Կարմիր հող թաղամաս, թիվ 2, կադաստրային ծածկագիր 09-101-0104-0278),
   4) 0.010608 հա (գյուղ Տեղ, Կարմիր հող թաղամաս, թիվ 3, կադաստրային ծածկագիր 09-101-0104-0280),
   5) 0.007743 հա (գյուղ Տեղ, Կարմիր հող թաղամաս, թիվ 4, կադաստրային ծածկագիր 09-101-0104-0276),
   6) 0.004624 հա (գյուղ Տեղ, Կարմիր հող թաղամաս, թիվ 5, կադաստրային ծածկագիր 09-101-0104-0279),
   7) 0.004624 հա (գյուղ Տեղ, Կարմիր հող թաղամաս, թիվ 6, կադաստրային ծածկագիր 09-101-0104-0277)

   հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով 1քմ 514,8 ՀՀ դրամ կադաստրային արժեքով օտարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ օդային գծերի հենարանների տեղադրման նպատակով.
2. Համայնքի ղեկավարին՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասերի առուվաճառքի պայմանագիր:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հատկացումներ.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրի 4111 (աշխատողների աշխատավարձեր) հոդվածով 6000,0 հազ. դրամ,
2. «Տեղ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին 4511 հոդվածով տրամադրել սուբսիդիա՝ 2027,609 հազ. դրամ, որից՝
   1) 724,729 հազ. դրամ՝ աղբահանություն բաժնին,
   2) 361,822 հազ. դրամ՝ շրջակա միջավայրի պաշտպանություն բաժնին,
   3) 941,058 հազ. դրամ՝ ճանապարհային տրանսպորտ բաժնին,

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի փետրվարի 8-ը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 14.00-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

_____Դավիթ Ղուլունց

_____Արամ Միրզոյան

_____Նազիկ Բաղդասարյան

_____Արագած Ղուկասյան

_____Աննա Միքայելյան

_____Լորա Սիմոնյան

_____Արման Դալլաքյան

_____Վահե Առաքելյան

_____Արշակ Կարապետյան

_____Գևորգ Մարտիրոսյան

_____Արգամ Հովսեփյան

_____Հայրապետ Հայրապետյան

_____Մասիս Զեյնալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**